Ապահով երթևեկություն

Լավ կրթության համար



Հետազոտություն

2016

Գորիսի մամուլի ակումբ
ք. Գորիս, Անկախության 2
հեռ.՝ 028420731
Էլ. Փոստ՝ gorispressclub@gmail.com
Կայք՝ www.gorispress.am

«Ապահով երթևեկություն լավ կրթության համար»
հետազոտության աշխատանքային թիմ՝

Սուսաննա Շահնազարյան
Արթուր Վարդազարյան
Մարիամ Մաթևոսյան
Դավիթ Դադալյան
Քրիստինե Հայրապետյան
Անահիտ Բաղդասարյան

Համակարգչային խմբագրում և ձևավորում՝
Շուշան Օհանյան

Սույն հետազոտությունն իրականացվել է ԱՄՆ Պետդեպարտամենտի ֆինանսավորմամբ Գորիսի մամուլի ակումբ ՀԿ-ի կողմից **«Ապահով երթևեկություն՝ լավ կրթության համար»** ծրագրի շրջանակներում և նպատակ ունի վեր հանել ՀՀ Սյունիքի մարզի հանրակրթական դպրոցների մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տրանսպորտային ծառայությունների փոխհատուցումների հետ կապված խնդիրները:

Հետազոտության արդյունքները հիմք կհանդիսանան մշակելու այդ գործընթացում առկա խնդիրների լուծման և գործընթացի բարեփոխման առաջարկություններ:

Ներածություն

ՀՀ Կառավարությունը յուրաքանչյուր տարի պետական բյուջեից «Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում» հոդվածով դրամական միջոցներ է հատկացնում հանրակրթական դպրոցների այն ուսուցիչներին ու աշակերտներին, ովքեր սովորում կամ դասավանդում են այլ բնակավայրում: Այդ նպատակի՝ տրանսպորտային փոխհատուցումներն իրականացնելու համար 2016 թվականին պետական բյուջեից հատկացվել է 67 միլիոն 343 հազար դրամ, որից Սյունիքի մարզպետարանին՝ 25 մլն 800,5 հազար ՀՀ դրամ:

Սյունիքի մարզի 120 հանրակրթական դպրոցներում սովորում են 16 հազար 431 աշակերտներ, որոնց դասավանդում են 1981 ուսուցիչ: Նրանցից 400-ն աշխատում են ոչ իրենց բնակության վայրում: Սյունիքի մարզի դպրոցներում աշխատող երթևեկող ուսուցիչներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցման նպատակով 2014 թվականին հատկացվել է 19 մլն 732,9 հազար դրամ, 2015 թվականին՝ 25 մլն 800,5 հազար դրամ, նույնքան էլ՝ 2016 թվականին:

ՀՀ պետական բյուջեից հատկացվող գումարները ՀՀ Կրթության և գիտության նախարարության, մարզպետարանների միջոցով իրականացվող գործընթաց է, սակայն, հրապարակային և թափանցիկ չէ: Չկան հստակ մշակված չափորոշիչներ փոխհատուցումն իրականացնելու համար:

Հետազոտության արդյունքում վեր հանված խնդիրները և առաջարկությունները կօգտագործվեն օրենսդրական փոփոխությունների նախաձեռնություններում և կծառայեն կայուն հիմքեր՝ հանրության իրազեկման համար:



2011-2016 թ. Սյունիքի մարզի ստացված գումարները /մլն.դրամ/

1. Հետազոտության նպատակը և խնդիրները

Սույն հետազոտության նպատակն է վեր հանել ՀՀ Սյունիքի մարզի հանրակրթական դպրոցների մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տրանսպորտային ծառայությունների փոխհատուցումների հետ կապված խնդիրները, այս գործընթացում առկա խոչընդոտները, որոնք բացասաբար են ազդում հանրակրթության որակի ապահովմանը, բացահայտելու և վեր հանելու կոռուպցիոն ռիսկերը, պետական միջոցների օգտագործման արդյունավետության և ընդհանուր գործընթացի բարելավման ուղղությունները:

Հետազոտության արդյունքները կօգտագործվեն հետևյալ խնդիրների լուծման համար

ա/ Բարձրացնել ուսուցիչների, աշակերտների իրազեկության աստիճանը՝ պետական բյուջեից տրանսպորտային փոխհատուցումների համար հատկացվող գումարների, գործընթացի ընթացակարգերի մասին,

բ/ Մեդիա հարթակներն օգտագործել ուսուցիչների, աշակերտների իրավունքների խախտումներին հանրային հնչեղություն հաղորդելու համար,

գ/Նպաստել պետական միջոցների բաշխման թափանցիկության և հրապարակայնության ապահովմանը,

դ/ Մշակել առաջարկություններ՝ բարելավելու հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցման գործընթացը բարելավելու համար:

2. Հետազոտութան մեթոդները

Հետազոտությունն իրականացվել է որակական տվյալների հավաքագրման մեթոդներով, մշակվել են հարցազրույցների և ֆոկուս խմբային քննարկումների հարցաշարեր և դրանց միջոցով հավաքագրվել են անհրաժեշտ տվյալները: Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝

ա/փաստաթղթային ուսումնասիրություն

բ/ հարցազրույցներ

գ/ ֆոկուս խմբային քննարկումներ

դ/ մեդիա նյութեր

Հարցազրույցներ են իրականացվել ՀՀ Կրթության և գիտության նախարարության, Սյունիքի մարզպետարանի կրթության

վարչության պատասխանատուների, երթևեկող ուսուցիչների, աշակերտների, դպրոցների տնօրենների, տրանսպորտային ծառայություն իրականացնող կառույցների ղեկավարների հետ: Ֆոկուս խմբային 4 քննակումներ են կազմակերպվել Սիսիան, Գորիս, Կապան, Մեղրի քաղաքներում, որոնց, մասնակցել են տարածաշրջանային 21 գյուղական համայնքների 80 երթևեկող ուսուցիչներ, տնօրեններ, ուսումնադաստիարակչական գծով պատասխանատուներ, տրանսպորտային ծառայություն մատուցող կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հարցազրույցներ են իրականացվել թիրախ 21 դպրոցներում՝ տնօրենների, ուսուցիչների, աշակերտների հետ:

4. Հետազոտության նպատակին հասնելու համար իրականացվել են հետեւյալ գործողությունները՝

- դիտարկվել, ուսումնասիրվել և վերլուծվել են Սյունիքի մարզպետարանի կողմից պետական բուջեից մանկավարժների և աշակերտների տրանսպորտային փոխհատուցման գումարների բաշխման մեխանիզմները

- ուսումնասիրվել են թիրախ դպրոցների կողմից մարզպետարանին ներկայացված երթևեկող ուսուցիչներին հասանելիք տրանսպորտային փոխադրավարձի ծախսերի վճարման անդորրագրերը

- դիտարկվել են միջհամայնքային տրանսպորտային մրցույթների արդյունքները

- ճշտվել է թիրախ համայնքներում տրանսպորտային ծառայությունների փոխհատուցում ստացող ուսուցիչների ցանկը

- առկա խնդիրների վերաբերյալ պատրաստվել են տեսանյութեր, հոդվածներ:

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ամփոփագիր

Մինչև 2012 թվականը հանրակրթության բնագավառում առկա էին հետևյալ ծրագրերը՝

1. Հանրակրթական ծառայություններ /2011թ./
2. Հանրակրթության օժանդակության ծառայություններ /2011թ./
3. Հատուկ ընդհանուր կրթության ծառայություններ /2011թ./
4. Ներառական կրթություն /2011թ./
5. Մշակութային կրթական և գիտահետազոտական ծառայություններ /2011թ./
6. Երեկոյան ուսուցում /2011թ./
7. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության որակի և համապատասխանության» երկրորդ ծրագրի շրջանակներում կապիտալ ներդրումներ կրթության ոլորտի կազմակերպություններում /2011թ./
8. Ավագ դպրոցների նյութատեխնիկական բազայի բարելավում /2011թ./
9. Հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական բազայի բարելավում /2011թ./
10. Ներդրումներ կրթության ոլորտի օբյեկտներում /2011թ./
11. Աջակցություն համայնքային, միջհամայնքային, ոչ կառավարական, մասնավոր և այլ կազմակերպություններին ու անհատներին /2011թ./

2013 թվականին վերոնշյալ 11 ծրագրերը միավորվել են 1 ընդհանուր ծրագրի՝ **«Հանրակրթության ծրագրի»** ներքո, *«Հանրակրթության ծրագիր»* [1] :

«Հանրակրթության ծրագրի» նպատակը սահմանված է այսպես՝

Ապահովել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված պարտադիր հիմնական ընդհանուր և անվճար միջնակարգ կրթություն ստանալու իրավունքը: Աջակցել տարրական ընդհանուր կրթությանը նախապատրաստող նախադպրոցական կրթություն ստանալու երեխաների իրավունքների իրացմանը:

Ծրագրում՝ քաղաքականության միջոցառումների ցանկում, ընդգրկված է նաև մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տրանսպորտային փոխհատուցման կետը հետևյալ ձևակերպմամբ՝

Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցում՝

Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային միջոցներով տեղափոխման ապահովում: Այսինքն այս կետը հանդիսանում է հանրակրթության ծրագրի երկարաժամկետ նպատակներից մեկը և կարևորվում է ըստ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պարտադիր, հիմնական ընդհանուր և անվճար միջնակարգ կրթություն ստանալու իրավունքի ապահովման առումով:

Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցման ուղղությամբ քայլերը նաև ունեն գործնական բնույթ և յուրաքանչյուր տարի «ՀՀ բյուջեի մասին» օրենքով ՀՀ Կառավարության առաջարկմամբ՝ պետական բյուջեից «Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում» հոդվածով որոշակի գումար է հատկացվում: Օրինակ, 2016 թվականին հատկացվել է 67 միլիոն 343 հազար դրամ:

Գումարները պետական բյուջեով հատկացվում է ՀՀ Կրթության և գիտության նախարարությանը, որը կամ մարզպետարանների միջոցով, կամ ուղղակի ձևով հատկացվում է հանրակրթական դպրոցներին. Հանրապետությունում գործող ավագ դպրոցները ստանում են ուղղակի՝ Կրթության և գիտության նախարարությունից, իսկ հիմնական կամ միջնակարգ դպրոցներին գումարները հատկացվում են մարզպետարանների միջոցով: Փոխհատուցման գումարները չեն հանդիսանում դպրոցի բյուջեի մաս և չեն հաշվարկվում դպրոցի բյուջեի նախագծում:

Սյունիքի մարզի 120 հանրակրթական դպրոցներում սովորում է 16 հազար 431 աշակերտ, որոնց դասավանդում է 1981 ուսուցիչ: Նրանցից 400-ն աշխատում են ոչ իրենց բնակության վայրում: ՀՀ Սյունիքի մարզում գործում են 5 ավագ դպրոցներ, որոնք մանկավարժների և դպրոցահասակ երեխաների համար հատկացված փոխհատուցումը ստանում են Կրթության և գիտության նախարարությունից՝ ուղղակի, բայց նրանցից ոչ բոլորն են փոխհատուցում ստանում՝ Գորիս թիվ 4, Ակ. Բակունցի անվան թիվ 1ավագ դպրոցները:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով կրթության բնագավառի ծախսերը 2015թ.-ի ծախսերի նկատմամբ աճել են 6,423.5 մլն դրամով կամ 5.1 տոկոսով: Ավելացել են նաև «Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ» նախագծով հատկացված գումարները՝ 2015թ.-ի 13 միլիարդ 310 մլն-ից հասնելով 15 միլիարդ 821 մլն ՀՀ դրամի, իսկ «Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում» ծրագրով 2015թ-ին նախատեսված 67 մլն 343 հազար դրամի փոխարեն 2016-ին նախատեսվում է 71 մլն 917 հազար դրամ:

Եթե 2012թ.-ին Սյունիքի մարզպետարանին նշված հոդվածով հատկացված գումարը 2011թ.-ի համեմատ նվազել է՝ 21 մլն 218 հազար դրամից հասնելով 19 մլն 732 հազար 900 դրամի, անփոփոխ մնացել նաև 2013 և 2014 թվականներին, ապա 2015թ.-ին աճել է՝ հասնելով 25 մլն 800 հազար 500 դրամի: Նույնքան գումար է հատկացվել նաև 2016 թվականին:

2015-2016թթ.-ի ուսումնական տարում Սյունիքի մարզի երթևեկող 400 ուսուցիչներից բացի, ճանապարհածախսի փոխհատուցում են ստացել նաև 150 աշակերտներ:

Սյունիքի մարզի մի շարք համայանքներում տրանսպորտային փոխատուցման հետ կապված իրավիճակը, հարցազրույցներ դպրոցների տնօրենների, ուսուցիչների հետ

Շաքի համայնք/ Շաքիի միջնակարգ դպրոց



Շաքիի միջնակարգ դպրոցում աշխատող 26 մանկավարժներից երթևեկում են 9-ը. բոլորն էլ Սիսիան քաղաքից: Երթևեկող աշակերտներ չկան: Տնօրեն Վաղինակ Հարությունյանի խոսքով՝ ցանկալի կլիներ, որպեսզի բոլոր ուսուցիչները տեղացի լինեին, սակայն կադրերի բացակայության պատճառով հրավիրում են դրսի մասնագետներին, որոնք երթևեկության համար օրենքով սահմանված կարգով փոխհատուցում են ստանում:

Սիսիան-Շաքի միջհամայնքային տրանսպորտի 1 ուղևորի երկկողմանի երթևեկության արժեքը կազմում է 200 դրամ: Ուսուցիչները փոխհատուցում ստանում են ըստ շաբաթական այցերի թվի՝ հանրային տրանսպորտի ուղեվարձի սահմանված գնով: Նախկինում սպասարկող տրանսպարոտային կազմակերպության երթուղու ժամանակացույցը չէր համապատասխանում դասերի ժամանակացույցին, որի պատճառով եղել են դեպքեր, երբ ուսուցիչները երթևեկել են «դասի հաշվին»: Ուսուցիչների խոսքով՝ խնդիրն այսօր որոշ չափով լուծվել է տրանսպորտային երթուղին սպասարկող կազմակերպության և դպրոցի բանակցությունների արդյունքում:

Արմինե Առաքելյանն արդեն ութ տարի է երթևեկում է Սիսիանից Շաքի, ասում է, որ հարմարվել է ամեն օր «ճանապարհորդելուն», դժվարանում է միայն քաղաքում տեղաշարժվելուց, քանի որ ներքաղաքային տրանսպորտը կանոնավոր չի աշխատում: «Ստիպված եմ լինում ամառ-ձմեռ մեր տնից կանգառ 40 րոպե քայլել, դրա մեկ քառորդ ժամանակն էլ գյուղ հասնելու համար է պահանջվում»,- նշում է նա:

Սիսիան համայնք/Սիսիանի ավագ դպրոց

Սիսիանի ավագ դպրոցի 55 ուսուցիչներից երթևեկում է մեկը, իսկ 770 աշակերտներից՝ 57-ը, երթևեկող վարչական աշխատողներ չունեն: Սակայն ավագ դպրոցի երթևեկող միակ ուսուցիչը, ով երթևեկում է հարևան Բռնակոթ համայնքից փոխհատուցում չի ստանում:

Ավագ դպրոցում երթևեկող աշակերտներ կան Աղիտու, Բռնակոթ, Իշխանասար, Որոտան, Շաքի, Աշոտավան, Սալվարդ, Բնունիս, Անգեղակոթ, Տոլորս, Նորավան, Վաղատնի, Լծեն, Շամբ, Շաղատ, Շենաթաղ, Մուծք համայնքներից: Սիսիանի ավագ դպրոցի տնօրեն Նաիրա Ավանեսյանի խոսքով՝ ոչ բոլոր երթևեկող աշակերտներն են փոխհատուցում ստանում: Այն երթևեկող աշակերտները, ովքեր շաբաթվա հիմնական մասը մնում են Սիսիան քաղաքում, չեն փոխհատուցվում, իսկ ովքեր վերադառնում են իրենց բնակավայր, փոխհատուցվում են: Փոխհատուցումը կատարվում է մասնակի: Օրինակ, Իշխանասարից երթևեկող աշակերտների ճանապարհածախսը միակողմանի կազմում է 100 դրամ, բայց փոխհատուցում են 70 դրամի չափով: Մանկավարժները նշում են, որ երթևեկող աշակերտները ժամանակին են ներկայանում դասի:

«Հանրակրթական դպրոցների մանկավարժներին եւ դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում» ծրագրով երթևեկության ծախսի փոխհատուցում է նախատեսում նաև աշակերտների համար, որոնց ուղեվարձը պարտավորվում է փոխհատուցել այն դպրոցը, որտեղ նա նախընտրում է սովորել՝ պետական բյուջեի հատկացմամբ:

«Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագրով նշվում է՝ ապահովել աշակերտների տեղափոխությունը: Շատ աշակերտներ ցանկանում են առանձին առարկաների գծով խորացված կրթություն ստանալ և քանի որ գյուղական դպրոցներն ապահովում են միջնակարգ կրթություն, ստիպված հաճախում են ավագ դպրոցներ», -նշում է տնօրենը:

Լիլիթ Հարությունյանը Շաքիից է, սովորում է Սիսիանի ավագ դպրոցում: Նրա խոսքով՝ ամեն օր Շաքիից Սիսիան հասնելու համար ծախսում է 200 դրամ: «Շաբաթական 1000 դրամ եմ ծախսում, բայց միշտ չէ, որ ամբողջությամբ է փոխհատուցվում», -նշում է Լիլիթը:

Գորայք համայնք, Գորայքի միջնակարգ դպրոց

Դպրոցը 2015-2016թթ. ուսումնական տարում ունի 11 երթևեկող մանկավարժ, անցած տարվա հետ համեմատած, երթևեկող մանակավարժների թիվն ավելացել է 2-ով, ինչը պայմանավորված է համայնքում մասնագետների պակասի հետ: Մանկավարժները երթևեկում են Սիսիան-Ծղուկ-Գորայք երթուղով, որով սպասարկվում է նաև Ծղուկ համայնքը: Այս երթուղով ավելի շատ ուսուցիչներն են երթևեկում:

Դպրոցում երթևեկող աշակերտներ չկան: Մարզպետարանը, ըստ դպրոցի ներկայացրած տվյալների, թե յուրաքանչյուր ուսուցիչ քանի օր է երթևեկում, համապատասխան չափով փոխհատուցում է տրամադրում: Երթևկող 11 ուսուցիչներից ոչ բոլորն են ամբողջ շաբաթվա ծանրաբեռնվածությամբ աշխատում և ոչ բոլոր օրերին են դպրոց գնում: Երկու դեպքում էլ փոխհատուցումը չի ծածկում այն գումարը, որքան իրականում ծախսվում են. Սիսիանից Գորայք միջհամայնքային տրանսպորտի ուղևորավարձը կազմում է 700 դրամ, փոխհատուցում են 150 դրամով պակաս:

Արմինե Հարությունյանը և Նաիրա Հայրապետյանն աշխատում են Գորայքի միջնակարգ դպրոցում՝ ամեն օր երթևեկելով Սիսիան-Ծղուկ-Գորայք երթուղով: Արմինեն դպրոցի ուսմասվարն է, Նաիրան՝ քիմիայի ուսուցչուհին: Արմինե Հարությունյանի կարծիքով երթևեկելու համար կառավարության կողմից փոխհատուցում է նախատեսվում, որը նախատեսված է միայն ոչ վարչական աշխատողների համար: «Ի՞նչ տարբերություն, որ հաստիքացուցակով ուսմասվար եմ, ես էլ եմ երթևեկում, որի համար ինքս եմ վճարում»,-ասում է Արմինեն: Ուսմասվարի պաշտոնը նա զբաղեցնում է այս ուսումնական տարվա սկզբից, մինչ այդ, որպես ուսուցչուհի, շաբաթվա չորս օրերի որպես փոխհատուցում ստանում էր միջինը 9 հազար 500 դրամ, բայց ծախսում 11,2 հազար դրամ:

Գորայքի միջնակարգ դպրոցի 22 ուսուցիչներից 11-ը, որից 3 վարչական աշխատողներ են, այլ բնակավայրերից են, երթևեկության փոխհատուցում ստանում են միայն ուսուցիչները: Բացի ուսմասվարից, չեն փոխհատուցվում նաև զինղեկը, համակարգչային օպերատորը: Դպրոցի տնօրեն Մարտուն Թադևոսյանի կարծիքով՝ երթևեկության փոխհատուցում հատկացնելու գործընթացում խտրական վերաբերմունք է դրսևորվում: Անցյալ տարի ուսմասվարը հրաժարվել է աշխատանքից՝ նշված պատճառով:

Երթևեկության համար նախատեսված գումարների բաշխումը կատարվում է դպրոցների տնօրենների կողմից մարզպետարան ներկայացված փոխհատուցման

հաշվարկի հիման վրա, որտեղ ներկայացված է, թե յուրաքանչյուր ուսուցիչ քանի օր է երթևեկում ու որքան է կազմում տվյալ համայնքը սպասարկող հանրային տրանսպորտի երկկողմանի ուղեվարձը: Գորայքի ուսուցիչների խոսքով, սակայն փոխհատուցվում է մասնակի՝ հաշվարկված գումարի 70%-ի չափով: Դպրոցի տնօրինությունն ու հաշվապահությունն ուղեվարձի փոխհատուցումը կատարում են համամասնորեն, այսինքն, եթե մարզպետարանից, օրինակ, 30%-ով քիչ են նախատեսել գումարներ, ապա նույնքանով պակաս են վճարում ուսուցիչներին:

«Շաբաթվա 5 օրն էլ դաս ունեմ ու Գորայք հասնելու համար օրական ծախսում եմ 7 հարյուր, ամիսը՝ 14 հազար դրամ, բայց այդքան գումար երբևէ չեմ ստացել: Ամեն անգամ եղել են տարբեր գումարներ. 2 հազար 400-ից սկսած»,-նշում է Նաիրա Հայրապետյանը, ով երթևեկում է Բռնակոթից և երկու տրանսպորտային միջոց է փոխում: Բռնակոթ-Սիսիան երթուղու ուղեվարձը ներառված չէ իր փոխհատուցման տեղեկանքի մեջ: Նրա խոսքով՝ մեղքի բաժինն ունի նաև ինքը, քանի որ տնօրինությանը չի ներկայացրել համապատասխան տեղեկանք, որ նա երթևեկում է երկու բնակավայրից:

Ուսուցիչները նշում են, որ ուղեվարձի փոխտահուցման գումարները ստանում են ուշացումով, երկու ամիսը մեկ անգամ: «Պարտքեր չեն կուտակվում: Նախկինում ամիսներ շարունակ փոխհատուցում չէր տրվում, բայց հիմա կարգավորվել է»,-ասում է Գորայքի դպրոցի տնօրեն Մարտուն Թադևոսյանը:

Երթևեկող ուսուցիչների համար շարունակում է խնդիր մնալ այսպես կոչված «կիսատ» ամիսների երթևեկության փոխհատուցումը:

Սյունիքի մարզպետարանն ուսումնական տարվա 11/բացառությամբ հուլիս/ ամիսներից երթևեկության գումարներ չի նախատեսում հունվար, հունիս, օգոստոս, ինչպես նաև գարնանային և աշնանային արձակուրդների ամիսների/հիմնականում հոկտեմբեր, մարտ/ համար: Փոխհատուցում նախատեսված է միայն 8 ամսվա համար, այն դեպքում, երբ մյուս նշված ամիսներին, եթե ոչ ամբողջությամբ՝ այնուամենայնիվ, օրերի մեծ մասն ուսուցիչներն այցելում են դպրոց:

Գորայքի տնօրինության կողմից բաշխումը կատարվում է հետևյալ կերպ է.

Ամսվա կտրվածքով, դպրոցը մարզպետարան է ներկայացնում ուսուցիչների փոխհատուցման անհրաժեշտ գումարի նախահաշիվ, բայց եթե մարզպետարանը օրինակ 10%-ով պակաս է փոխհատուցում, ապա բոլոր մանակավարժները նույն չափով պակաս են ստանում: Այսինքն, միշտ չէ որ մարզպետարանը ներկայացված գումարի 100%ի չափով է փոխհատուցում:

Իշխանասար համայնք, Իշխանասարի հիմնական դպրոց

2015-2016թթ. ուսումնական տարում Իշխանասարի հիմնական դպրոցի 10 ուսուցիչներից 9-ը երթևեկում են Սիսիան քաղաքից: Դպրոցում երթևեկող աշակերտներ չկան:

Ուսուցիչները երթևեկում են Սիսիան-Իշխանասար-Սիսիան հանրային տրանսպորտով, որի միակողմանի արժեքն ուսուցիչների համար կազմում է 100, բնակիչների համար՝ 150 դրամ: Սպասարկող տրանսպորտային կազմակերպությունը հրաժարվում է երթուղին սպասարկել նշված գումարով, քանի որ ծախսարդյունավետ չէ:

Միջհամայնքային երթևեկություն ապահովող տրանսպորտային կազմակերպությունը պատրաստ է գիծը սպասարկել այն պայմանով, որ ուղեվարձը բարձրացվի 50 դրամով: Ուղեվարձի թանկացմանը դեմ են, մասնավորապես, երթևեկող ուսուցիչները, քանի որ վստահ չեն, որ մարզպետարանը կավելացնի փոխհատուցման գումարները: Ուսուցիչների երթևեկության նախահաշիվը դպրոցը ներկայացնում է 100 դրամով, սակայն մարզպետարանը փոխհատուցում է 70 դրամով:

Թեև «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքով համայնքի ղեկավարի պարտադիր, անգամ կամավոր լիազորությունների մեջ չի մտնում կրթական համակարգին աջակցություն ցուցաբերել, այնուամենայնիվ, Իշխանասար համայնքի ղեկավարը յուրաքանչյուր ամիս 55 հազար դրամ է հատկացնում դպրոցին՝ երթևեկող 9 ուսուցիչների համար:

Այստեղ ևս վարչական աշխատողները չեն փոխհատուցվում: Ուսուցիչների խոսքով՝ երթևեկության հետ կապված դժվարություններն ազդում են կրթության որակի վրա: Իշխանասարը Սիսիանից գտնվում է 7 կմ հեռավորության վրա, սակայն միջհամայնքային անբարեկարգ ճանապարհի պատճառով, ուսուցիչները 15 րոպեի փոխարեն դպրոց են հասնում կրկնակի անգամ ուշ: Ուսուցիչները նշում են, անգամ մասնավոր տաքսիներն են հրաժարվում սպասարկել:

Աշոտավան համայնք, Աշոտավանի միջնակարգ դպրոց

Աշոտավանի միջնակարգ դպրոցում աշխատում է 20 ուսուցիչ, որից 4-ը երթևեկում են այլ բնակավայրից՝ Սիսիանից, Իշխանասարից, իսկ դպրոցում սովորող 60 աշակերտից երթևեկում են 2-ը:

Իշխանասարից երթևեկող ուսուցչուհին Աշոտավան հասնելու համար օգտվում է չորս տրանսպորտից: Երթևեկող է նաև ռուսաց լեզվի ուսուցչուհին՝ Մարո Ասլանյանը, ով նշում է, որ նախկինում երթևեկելն ավելի հեշտ էր, քանի որ հանրային տրանսպորտն աշխատում էր. «Հիմա շատ դժվար է, տաքսիով ենք երթևեկում, երբեմն 2-3 հոգով, երբեմն՝ մենակ»:

Հարութ Ղազարյանը երթևեկող աշակերտ է: Ապրում է հարևան Թասիկ գյուղում: Նա պատմում է, որ դասի հասնում է պատահական տրանսպորտով, երբեմն նաև կաթի մեքենայով, ասում է, որ պատահում են դեպքեր, երբ մեքենա չի հանդիպում և տուն հասնելու համար, ստիպված մեքենայի 30 րոպե անցնելու ճանապարհը ոտքով հաղթահարում է 1 ժամում: Երբեմն էլ, եթե մեքենա չի լինում, դասի չի գնում:

Կոռնիձոր համայնք, Կոռնիձորի միջնակարգ դպրոց

Կոռնիձորի դպրոցում, որտեղ 151 աշակերտ է սովորում, աշխատում է 22 ուսուցիչ: Նրանցից տեղացի չէ 3-ը: Ըստ դպրոցի տնօրեն Սուսաննա Հովհաննիսյանի, երթևեկող ուսուցիչների փոխհա-տուցումը բավարար է կատարվում: Յուրաքանչյուրն ամսական ստանում է 13-14 հազար դրամ՝ կախված նրանից, թե ուսուցիչը շաբաթական քանի օր է աշխատում: Դպրոցի հաշվապահը հաշվում է շաբաթական ժամերի ծանրաբեռնվածությունը, միակողմանի երթևեկության ծախսը, հեռավորությունը Գորիսից, ամսական երթևեկության օրերի թիվը, վերջնահաշիվը:

Մարզպետարանը, ըստ ներկայացվածի, փոխհատուցում է, որը կատարվում է հանրային տրանսպորտի ուղեվարձի չափով. այն երկկողմանի կազմում է 700 դրամ: Սակայն ներհամայնքային տրանսպորտն անկանոն է աշխատում, և ուսուցիչները ստիպված են տաքսիով երթևեկել, իսկ փոխհատուցում հատկացնելիս այդ հանգամանքը հաշվի չի առնվում:

«Տաքսիով օրական յուրաքանչյուրս վճարում ենք երկկողմանի 1 հազար դրամ, բայց փոխհատուցումը կատարվում է չգործող հանրային տրանսպորտի ուղեվարձի չափով՝ 700 դրամ»,-ասում է դպրոցի երթևեկող ուսուցիչներից մեկը:

Երթևեկող ուսուցիչների ուղեվարձի փոխհատուցման համար յուրաքանչյուր ամիս 15 հազար դրամի չափով աջակցում է Կոռնիձոր համայնքի ղեկավար Արկադիա Խաչատրյանը: Դպրոցի տնօրենը նշում է, որ փոխհատուցման գումարները ստանում են պարբերաբար, հիմանականում՝ մի քանի ամիսը մեկ պարբերությամբ: Սուսաննա Հովհաննիսյանն ասում է, որ «կիսատ ամիսների» դիմաց ուսուցիչները նույնպես փոխհատուցվում են, ինչը, սակայն չեն հաստատում ուսուցիչները:

Ըստ մանկավարժների, ամեն ամիս փոխհատուցման գումարները տարբեր են լինում, օրինակ, այս տարվա հունվարին ստացել են 6 հազար դրամ, որը նրանց խոսքով, քիչ գումար է կազմում: Մանկավարժներից ոմանք նաև նշում են, որ մեկ ամսվա համար միջինը 20-22 հազար դրամ են ծախսում երթևեկելու համար, բայց փոխհատուցվում կիսով չափ: Երբ խնդրի մասին ահազանգում են մարզպետարանին, այդ ամսվա համար հարցը կարգավորվում է:

Քարաշեն համայնք, Քարաշենի միջնակարգ դպրոց

Քարաշենի միջնակարգ դպրոցի 19 ուսուցիչներից երթևեկում են 7-ը: Ամեն օր Գորիսից Քարաշեն հասնելու համար անցնում են 16 կմ ճանապարհ, այն հույսով, որ պետությունը կփոխհատուցի ուղեվարձը: Սակայն այստեղ ևս փոխհատուցումը կատարվում է մասնակի: Օրինակ, 2015-2016թթ. ուսումնական տարում սեպտեմբեր ամսվա համար ստացել են 8 հազար 800 դրամ ճանապարհածախս՝ նախկին 12 հազարի փոխարեն:

Դպրոցի տնօրեն Արտյոմ Մարդյանի խոսքով՝ ուսուցիչները փոխհատուցում ստանում են ըստ իրենց ամսական երթևեկության օրերի թվի: Արդեն մի քանի տարի է, ինչ չի գործում Գորիս-Քարաշեն-Գորիս հանրային տրանսպորտը, որը պայմանավորված է նրանով, որ ուղևորահոսքի նվազման պատճառով տրանսպորտային կազմակերպությունները հրաժարվում են երթուղին սպասարկել: Երթևեկող ուսուցիչները ստիպված երթևեկում են տաքսիներով՝ երկկողմանի, յուրաքանչյուրը վճարելով 600 դրամ: Մեկ ուսուցիչը 22 աշխատանքային օրվա համար ծախսում է միջինը 13 հազար 200 դրամ, սակայն փոխհատուցվում 60%-ի չափով: Դպրոցի տնօրենի խոսքով՝ուսուցիչները «կիսատ ամիսների» դիմաց գումար ստանում են:

Ֆոկուս խմբային քննարկումներ ՀՀ Սյունքի մարզում

Գորիսի մամուլի ակումբ ՀԿ-ի կողմից իրականացվել է ֆոկուս խմբային քննարկումներ Մեղրի, Կապան, Գորիս, Սիսիան համայնքներում՝ տարածաշրջանների դպրոցների մանկավարժների մասնակցությամբ: Քննարկումներին ընդհանուր հաշվով մասնակցել է 30 դպրոցի 70-ից ավելի ներկայացուցիչ:

Քննարկումների նպատակն էր վեր հանել մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տրասնպորտային փոխհատուցման հետ կապված խնդիրները, առկա խոչընդոտները, բարելավման ուղղությունները:

Սիսիանի ֆոկուս-խմբային քննարկում

Արուսյակ Բաղալյանն աշխատում է Տոլորսի դպրոցում, ապրում՝ Սիսիանում: Նա ամեն օր Տոլորս հասնելու համար անցնում է 8 կմ ճանապարհ: Նրա խոսքով՝ թեև ոչ ամբողջությամբ, բայց ամեն ամիս փոխհատուցվում է ճանապարհածախսը: Իրենց դպրոցում երթևեկությունը քիչ թե շատ կարգավորված է, քանի որ Սիսիանին մոտ համայնք է: «Ես վստահ եմ, որ շատ ուսուցիչներ անգամ անտեղյակ են, որ այդ գումարները տրամադրում է պետությունը՝ մարզպետարանի միջոցով: Պարզ չէ նաև, թե ինչու չեն վճարում «կիսատ» ամիսների համար, կամ ինչպես է որոշվում, որ այս կամ այն ուսուցիչը պետք է ստանա 80%-ի չափով փոխհատուցում, մյուսը՝ 70%: Մեր ունեցած խնդիրները մեծամասամբ ծագում են նրանից, որ մենք քիչ ենք իրազեկված»,-նշում է Տոլորսի դպրոցի երթևեկող ուսուցիչը:

Արմենուհի Նազարյանն աշխատում է Մուծքի միջնակարգ դպրոցում, որի հեռավորությունը Սիսիանից կազմում է 26 կմ: Խոսելով դժվարությունների մասին, նա նշում է, որ երթևեկության ամենամեծ դժվարությունը կապված է ձմռան ամիսների հետ: Հաճախ ճանապարհը փակվում է, ու երթևեկող ուսուցիչները ստիպված որոշակի հատված ոտքով են հասնում դպրոց:

Շենաթաղի միջնակարգ դպրոցի երթևեկող ուսուցչուհի Մարինե Պետրոսյանի համար աշխատանքային օրը սկսվում է առավոտյան ժամը 7:30-ից, վերջանում՝ երեկոյան 19:00-ին: Նա ամեն օր ստիպված է Սիսիանից 36 կմ հեռավորությունն անցնել՝ Շենաթաղ հասնելու համար: «Ճանապարհներն ահավոր վիճակում են, մինչև դպրոց ենք հասնում, ի վիճակի չենք լինում դաս վարել: Պատահում է, որ ուշանում ենք դասից, ստիպված՝ տնօրենի համաձայնությամբ այնպես ենք արել, որ առաջին ժամերով դաս չունենանք, որպեսզի հասցնենք դպրոց հասնել»,-նշում է Ն. Մկրտչյանը ու հավելում, որ այլ բնակավայրից երթևեկելն ազդում է դասապրոցեսի վրա: Նա նշում է, որ դասերն

ավարտում են 15:00-ին, բայց տրանսպորտը գյուղ է հասնում 17:30-ին, քանի որ սպասարկում է 4 գյուղերի համար, որի ուղեվարձը միակողմանի կազմում է 800 դրամ:

Ուղեվարձի փոխհատուցումը մասնակի է կատարվում նա Սալվարդի միջնակարգ դպրոցում: Հանրային տրանսպորտը չի գործում: Դպրոցի երկու երթևեկող ուսուցիչը տեղափոխվում են տաքսիով: Շաբաթական երեք անգամ դպրոց գնալու համար ծախսում են յուրաքանչյուրը 6000 դրամ, որի դիմաց ամսական ստանում են 7000 դրամ փոխհատուցում:

Կապանի ֆոկուս-խմբային քննարկում

Կապանի 45 գյուղական համայնքների դպրոցներից երթևեկող ուսուցիչներ կան 20-ում: Օրինակ, Տանձավերի դպրոցն ունի երկու երթևեկող ուսուցիչ, ովքեր ապրում են Կապանում: Հանրային տրանսպորտ չլինելու պատճառով՝ նրանք երթևեկում են տաքսիով: Ամսական ծախսում են 20 հազար դրամ, փոխհատուցվում առավելագույնը 7 հազար դրամ: Ճանապարհի հեռավորության պատճառով, որը կազմում է 37 կմ, երկուշաբթի գնում, ուրբաթ՝ հետ են վերադառնում: Երթևեկող ուսուցչուհի Անահիտ Խաչատրյանի խոսքով երբ նախկինում հանրային տրանսպորտը կանոնավոր աշխատում էր, ավտոբուսով էին երթևեկում:

Ուսուցչուհիներից մեկը գիշերում է բարեկամուհու տանը, ՝ Ա. Խաչատրյանն ապրում է իրեն հատկացված տանը: Նրա խոսքով՝ թեև կենցաղային պայմաններն այնքան էլ լավ չեն, բայց ստիպված մնում է: Տան ջեռուցումը, էլեկտրաէներգիայի վարձավճարը իր սեփական միջոցներով է կատարում:

Երթևեկող ուսուցչուհիներն ասում են, որ «կիսատ ամիսներից» միայն չեն ստանում հունվար ամսվա գումարը: Նախկինում ևս հունիս ամսվա համար չէին փոխհատուցվում, բայց ահազանգելուց հետո նշված ամսվա համար ևս ուղեվարձի փոխհատուցում ստացել են:

Կապանի տարածաշրջանի ամենամեծ թվով երթևեկող թվով ուսուցիչներ կան Արծվանիկի դպրոցում: 22 ուսուցիչներից երթևեկում են 13-ը: Ներհամայնքային տրանսպորտը թեև գործում է, բայց չեն կարողանում օգտվել, քանի որ ժամանակացույցի անհամապատասխանություն կա: Հանրային տրանսպորտով օգտվելու դեպքում երթևեկող ուսուցիչները երկկողմանի վճարում են 700 դրամ, այն դեպքում, երբ

փոխհատուցում ստանում են մեկ օրվա համար 420 դրամի չափով: Հիմնականում երթևեկում են իրենց գործընկերների մեքենաներով: Ներքին պայմանավորվածության համաձայն, փոխհատուցման գումարներն ուսուցիչները տալիս են իրենց գործընկերին, որոնց մեքենաներով դասի են գնում: Նրանք նշում են, որ ստացած գումարը բավարարում է միայն վառելիքի ծախսը հոգալու համար: Ամորտիզացիոն ծախսերը հոգում է մեքենայի սեփականատերը:

Ֆոկուս-խմբային քննարկմանը մասնակցած Շիկահողի դպրոցի երթևեկող ուսուցչուհի Մարգարիտա Արզումանյանը նշում է, որ երթևեկության հետ կապված դժվարություններ կան նաև իրենց համայնքում: Շիկահող համայնքի դպրոցում այս ուսումնական տարվանից Ֆիզկուլտուրա, պատմություն առարկաներ պարապում են ոչ մասնագետներ, իսկ օտար լեզու առարկա ընդհանրապես չի դասավանդվում: Ուսուցչի թափուր պաշտոնի համար մրցույթ է հայտարարվել, բայց մրցույթին մասնակցելու հայտեր չեն ներկայացվում:

Շիկահողի դպրոցը սպասարկում է նաև հարևան գյուղի՝ Սրաշենի աշակերտներին, քանի որ գյուղում որպես այդպիսին դպրոց չկա: Գյուղապետարանը տարածք է հատկացրել, որպեսզի Սրաշենի 10 աշակերտներ ամեն օր իրենց գյուղից չհասնեն հարևան գյուղ: Շիկահողի դպրոցում սովորում է 33 աշակերտ:

Կապանից երթևեկող Մարգարիտա Արզումանյանը ոչ միայն աշխատում է Շիկահողի դպրոցում, այլև Սրաշենի համայնքային կենտրոնում: «Շաբաթական 25 մուտք ունեմ, բայց 0,25 դրույքի պատճառով, վճարվում եմ 11 դասաժամի համար, բացի այդ, երկար դասամիջոցին ստիպված եմ լինում Շիկահողից հասնել Սրաշեն, որ այնտեղ էլ պարապեմ»,-ասում է Մ. Արզումանյանը:

Շիկահողից Սրաշեն հեռավորությունը կազմում է 4կմ, որն ուսուցիչները հաղթահարում են պատահական մեքենաներով: Նրանք նշում են, որ թեև հանրային տրանսպորտն աշխատում է շաբաթվա երկու օր, բայց ժամանակացույցի անհամապատասխանության պատճառով չեն կարողանում օգտվել:

Կապանից Շիկահող, այնուհետև Սրաշեն հասնելու համար մեկ ուսուցիչը տաքսիով երթևեկելու համար ամսական ծախսում է 25-28 հազար դրամ, փոխհատուցվում կեսից էլ պակաս չափով: Ուսուցիչները ստիպված երթևեկում են իրենց աշխատավարձի հաշվին, որը ևս մեծ գումար չի կազմում՝ 40-50 հազար դրամ:

Մեղրիի ֆոկուս-խմբային քննարկում

Երթևեկող ուսուցիչների ուղեվարձի փոխհատուցում կատարվում է մասնակի նաև Մեղրու տարածաշրջանում: Այստեղ ևս չկան հստակ որոշված մեխանիզմներ, չափորոշիչներ, որոնց համաձայն կատարվում է երթևեկության փոխ-հատուցումը:

Մեղրու տարածաշրջանի 13 գյուղական համայնքների դպրոցներից երթևեկող ուսուցիչներ են աշխատում Շվանիձորում, Կարճևանում, Նռնաձորում, Ալվանքում, ընթացիկ ուսումնական տարվանից սկսած՝ նաև Լիճքի դպրոցում:

Մեղրիից 25 կմ հեռավորության վրա գտնվող Լիճքի միջնակարգ դպրոցում սովորում է 5 աշակերտ: Դասավանդող 7 ուսուցիչներից տեղացի չէ միայն կենսաբանության և քիմիայի ուսուցչուհի Անի Հովսեփյանը: Դպրոցի տնօրեն Էսման Պողոսյանի խոսքով՝ առաջին տարին է, որ երթևեկող ուսուցիչ ունեն, և նրա համար յուրաքանչյուր ամիս մարզպետարանի կողմից ուսումնական տարվանից սկսած՝ նաև Լիճքի դպրոցում:

Մեղրիից 25 կմ հեռավորության վրա գտնվող Լիճքի միջնակարգ դպրոցում սովորում է 5 աշակերտ: Դասավանդող 7 ուսուցիչներից տեղացի չէ միայն կենսաբանության և քիմիայի ուսուցչուհին, ում ամսական հատկացվում է 6700 դրամ: Փոխհատուցումը կատարվում է 1կմ-ը 12 դրամ հաշվարկով:

«Աշխատում եմ նաև Ալվանքի դպրոցում, բայց ավելի դժվար է Լիճքի դպրոց հասնելը: Ամսական նախատեսված 6700 դրամը բավականացնում է միայն 2 օր հաճախելու համար: Ստիպված աշխատանքի եմ գնում ամուսնուս մեքենայով, ով ստիպված սպասում է մինչև դասերի ավարտը»,-նշում է Ա. Հովսեփյանը:

Շվանիձորի միջնակարգ դպրոցի 17 ուսուցիչներից երթևեկում են 3-ը, ովքեր ապրում են Ագարակում: Լիա Ալեքսանյանը նշում է, որ ամսական հաշվարկով յուրաքանչյուրը ծախսում է 40 հազար դրամ, սակայն փոխհատուցվում են 25%-ի չափով: Երթևեկում են տաքսիներով: Վարորդն ուսուցիչներին չի սպասում, հետ է վերադառնում Ագարակ ու դասերի ավարտից հետո, կրկին 23 կմ հեռավորություն անցնելով, հասնում Շվանիձոր: «Այսինքն, ծախսը կրկնակի է դառնում, իսկ որպես ճանապարհածախսի փոխհատուցում, ստանում ենք օրական 500 դրամ՝ ծախսելով 2000-ը»,-ասում է Շվանիձորի դպրոցի ուսուցչուհի Աննա Հովհաննիսյանը:

Մեղրու տարածաշրջանում ամենամեծ թվով երթևեկող ուսուցիչներ աշխատում են Կարճևանի միջնակարգ դպրոցում՝ 14 ուսուցիչներից երթևեկում է 6-ը: Ուսուցիչները նշում են, որ չնայած երթևեկելու հետ կապված դժվարությունների չեն հանդիպում, բայց ուղեվարձի փոխհատուցումն ամբողջությամբ չեն ստանում:

«Շաբաթական 5 օր աշխատում եմ՝ ամսական ծախսելով 5-6 հազար դրամ, փոխհատուցվում՝ նշվածից հազար դրամ պակաս չափով»,-ասում է Մարիետա Գևորգյանն ու հավելում, որ մյուս համայնքների համեմատ իրենց մոտ փոխհատուցումը քիչ թե շատ կանոնակարգված է:

Կարճևանի հիմնական դպրոցի կենսաբանության ուսուցիչ Արմեն Ղուկասյանը հինգ տարվա ընթացքում ենթադրելով, որ վարչական աշխատող է, երթևեկության փոխհատուցում չի ստացել:

«Թյուրիմացություն է եղել, ես ինքս գիտեի, որ վարչական աշխատող եմ, Գորիսի մամուլի ակումբի օգնությամբ պարզելուց հետո, դիմեցի տնօրենին, պարզվում է, որ այս ընթացքում ուղեվարձի փոխհատուցում ստացել եմ, ուղղակի քանի որ աշխատավարձիս հետ միասին են փոխանցել բանկային քարտիս, չգիտեի, որ փոխհատուցում ստացել եմ»,-հավելում է Ա. Ղուկասյանը:

Նա համատեղությամբ աշխատում է նաև Ագարակի դպրոցում: Կարճևանի դպրոց այցելում է շաբաթական 2 օր: Խնդրի լուծման համար առաջարկում է, որպեսզի ուսուցիչներին տեղափոխող ավտոբուս տրամադրվի և այդ նպատակի համար նախատեսված փոխհատուցման գումարները՝ որպես աշխատավարձ, վճարվի երթուղին սպասարկող վարորդին: Նրա խոսքով՝ միայն այդ դեպքում ուսուցիչների երթևեկության փոխհատուցմանն ուղղված միջոցներն արդյունավետ կծախսվեն:

Կարճևանի ուսուցիչների համար մեկ օրվա ուղեվարձը հաշվարկվում է օրական 180 դրամով՝ հանրային տրանսպորտի ուղեվարձի չափով: Սակայն նշված գումարը չի բավականացնում ո՞չ հանրային տրանսպորտից, ո՞չ տաքսի ծառայությունից օգտվելու համար:

Կարճևանի հիմնական դպրոցն ունի նաև երթևեկող 3 աշակերտ, ովքեր սովորում են Ագարակի միջնակարգ դպրոցում և ամսական ստանում են 3հազար 500-ական դրամ փոխհատուցում: Տաքսի ծառայության ուղևորափոխադրումն այնպես է կազմակերպված, որ առավոտյան ուսուցիչներին Ագարակից Կարճևան տեղափոխող մեքենան հետդարձին իր հետ է վերցնում նաև տեղի դպրոցի աշակերտներին:

1. **Դժվարություններ և խնդիրներ դպրոց հաճախելու ընթացքում**

Սյունիքի մարզի մի շարք գյուղական համայնքներում չի գործում միջհամայնքային հասարակական տրանսպորտ: Այս հանգամանքը դժվարություններ և խոչընդոտներ է ստեղծում մանկավարժների և դպրոցահասակ երեխաների դպրոց հաճախելու համար, եթե նրանք բնակվում են այլ համայնքում: Խնդիրներ են առաջանում նաև այն դեպքերում, երբ միջհամայնքային տրանսպորտը գործում է շաբաթվա որոշակի օրերին, ժամերին:

Քննարկումների ընթացքում ներկայացված խնդիրների մի մասը կապված է եղել սպասարկող կազմակերպության հանրային տրասպորտի ժամային գրաֆիկների հետ: Այսինքն, միշտ չէ, որ ներհամայնքային տրանսպորտի ժամային գրաֆիկը համապատասխանում է մանկավարժների և դպրոցահասակ երեխաների դասաժամերի հետ: Իսկ երբեմն, այն գործնականում հնարավոր չէ համապատասխանեցնել, քանի որ հանրային տրանսպորտի և դպրոցի աշխատանքային գրաֆիկները համապատասխանեցված են: Բացի այդ, դպրոցում գործում են խմբակներ, կազմակերպվում են արտադասարանական միջոցառումներ, ժողովներ, որոնց մասնակցություն են ունենում նաև երթևեկող ուսուցիչներն ու աշակերտներ: Եթե տեղացիների համար դժվարություն չի ներկայացնում հավելյալ մնալ դպրոցում, ապա ուսուցիչները մտածում են միայն մինչև երեկո տուն հասնելու մասին:

Կան դպրոցներ, որտեղ կան միայն մեկ կամ երկու երթևեկող մանկավարժ, հանրային տրանսպորտը չի գործում, իսկ դպրոցն իրենց բնակավայրից գտնվում է 30-40 կմ հեռավորության վրա: Այս դեպքում անհրաժեշտ է լինում օգտվել տաքսի ծառայությունից, իսկ փոխհատուցումը չի բավարարում տաքսի ծառայության համար: Մանկավարժները ստիպված են լինում ամբողջական վճարել տաքսու համար, որը կարող է հասնել մինչև 2հազար 5հարյուրից մինչև 10հազար դրամ: Ուսուցիչները հարկադրված սպասում են, որ մի քանի մարդ հավաքվի, որպեսզի միանան ու մեկ տաքսով գնան: Խնդիրն առկա է հատկապես Տեղ, Շվանիձոր, Շիկահող, Աշոտավան, Շաքի, Կարևճան և շատ այլ համայնքներում:

Որոշ համայնքներում մանակավաժներն ամեն օր դասերից հետո հարկադրված կանգնում են ճանապարհին ու պատահական մեքենաներով երթևեկում: Հաճախ ստիպված են լինում տեղափոխման համար 2-3 ժամ կորցնել, ինչը ոչ միայն անհարմարություններ է առաջացնում, այլև ուսուցիչը հնարավորություն չի ունենում հաջորդ օրվա դասին պատշաճ նախապատրաստվել:

Այս ամենին գումարվում է նաև այն փաստը, որ գյուղական ճանապարհները հիմնականում անբարեկարգ են, հաճախ դժվարանցանելի: Ձմռանը խնդիրն ավելի է սրվում, անգամ տաքսիներն են հրաժարվում սպասարկել:

2. Ինչպես է հաշվարկվում փոխհատուցումը և որքան գումար է հատկացվում

Չնայած ՀՀ բյուջեով հստակ նշված է, թե տարեկան ՀՀ հանրակրթական դպրոցներին որքան գումար է հատկացվում տրանսպորտային փոխհատուցման համար, այնուամենայնիվ, չկան հստակ հաշվարկի մեխանիզմներ:

Քննարկումներին մասնակից մանկավարժները ոչ բավարար տեղեկատվություն ունեին հատկացվող գումարների չափի, դրանց հաշվարկի ձևերի, տրամադրման առկա մեխանիզմների, պատասխանատուների մասին, որոշ մասնակիցներ նշեցին, որ փոխհատուցումը տրվում է ըստ կմ-ի: 1 կմ-ի համար հատկացվում է 10-12 դրամ, օրինակ, եթե մանակավարժի բնակվելու վայրը դպրոցից գտնվում է 50 կմ հեռավորության վրա, իսկ եթե ոչ, ապա մեկ այցի համար տրվում է մինչև 500 դրամ փոխհատուցում:

Սակայն ոլորտի պատասխանատուները, մասնավորապես, միջհամայնքային տրանսպորտն ապահովող ընկերությունները փաստում են, որ միջհամայնքային տրանսպորտի ծառայության ուղեվարձն այդպես չի որոշվում, այլ հաշվի են առնվում մի շարք չափորոշիչներ: Բացի այդ, երթուղիները սպասարկելու համար տրանսպորտային ծառայությունների սպասարկման համար հայտարարված մրցույթներին որևէ կազմակերպություն չի մասնակցում:

3. Միջհամայնքային տրանսպորտի աշխատանքի ազդեցությունը

Երթևեկող մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տեղափոխման խնդիրներն ավելի քիչ են, եթե գյուղական համայնքը մոտ է քաղաքային համայնքներին, քանի որ ներհամայնքային տրանսպորտն ավելի կանոնակարգված է: Վերջին հանգամանքով է պայմանավորված, որ քաղաքային համայնքներին մոտ գտնվող գյուղական բնակավայրեր այցելող ուսուցիչները փոխհատուցվում են ամբողջությամբ, որովհետև ուղեվարձը կազմում է 100 դրամ:

Ստացվում է այնպես, որ գյուղական համայնքը որքան հեռու է գտնվում քաղաքային կենտրոնից, նույնքան հանրային տրանսպորտը կանոնավոր չի աշխատում, այսինքն նաև ուղեվարձի գինն է բարձրանում, որով էլ պայմանավորված՝ հեռավոր գյուղերի դպրոցներում աշխատող երթևեկող ուսուցիչների և աշակերտների տրանսպորտային ծախսերի փոխհատուցումը կատարվում է մասնակի: Այսինքն, այն համայնքներում, որտեղ հանրային տրանսպորտը չի գործում, երթևեկող ուսուցիչներն օգտվում են տաքսիներից, որոնց ուղեվարձը բավական թանկ է տրանսպորտի ուղեվարձից, իսկ մարզպետարանը փոխհատուցում է բացառապես,հանրային ուղեվարձի գնի չափով:

4. Փոխհատուցումը կատարվում է ուշացումներով

ՀՀ Կրթության և Գիտության նախարարության ծախսային ուղղություններում ներառված «Հանրակրթական դպրոցների մանկավարժներին եւ դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում» հոդվածով ուսուցիչների համար նախատեսված տրանսպորտային ծառայությունների փոխհատուցումը կատարվում է հետևյալ կերպ. հանրակարթական դպրոցների տնօրենները յուրաքանչյուր ամիս կազմում են ուսուցիչների ճանապարհածախսի նախահաշիվ, որը ներառում է ուսուցիչների անուն- ազգանունները, շաբաթական ժամերի ծանրաբեռնվածությունը, միակողմանի երթեւեկության ծախսը, տվյալ համայնքից միակողմանի երթեւեկությունը կմ-ով, ամսական երթեւեկության օրերի թիվը և գումարի չափը, որը ներկայացվում է Սյունիքի մարզպետարան կամ ՀՀ Կրթության և Գիտության նախարարություն/ավագ դպրոցների պարագայում/, ըստ որի էլ կատարվում են փոխհատուցումները: Սակայն երթևեկող մանկավարժների և դպոցահասակ երեխաների տրանսպորտային փոխհատուցման գործընթացում առկա են ուշացումներ: Չկան փոխհատուցման մեխանիզմի հստակ պահանջներ, մի շարք

դպրոցներում իրականացվում են փոխանցմամբ՝ անհատական քարտի միջոցով, կամ տրվում է կանխիկ՝ լրացնելով ստացման անդորրագիր, ստացական, իսկ աշակերտների փոխհատուցումը տրվում է կանխիկ:

Երթևեկող ուսուցիչներն իրենց մտահոգությունն են հայտնում նաև այն մասին, որ դպրոցական արձակուրդներին կամ քննական ամիսներին ուսուցիչները չնայած դպրոց են հաճախում, այնուամենայնիվ, այդ օրերի համար երթևեկության փոխհատուցում չեն ստանում: Չկա մեկնաբանություն այն մասին, թե ինչ հիմունքներով է որոշվում, որ նշված օրերին ուսուցիչները պարտավոր են սեփական միջոցներով երթևեկել և փոխհատուցում չստանալ:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ընտրված բոլոր համայնքների դպրոցների երթեւեկող ուսուցիչները փոխհատուցվում են մասնակի: Դպրոցի տնօրենների, ուսուցիչների և մարզպետարանի աշխատակիցների հետ զրույցներից պարզ է դառնում, որ ուսուցիչների տրանսպորտային ծախսերը փոխհատուցելու համար չկան հստակ մշակված մեխանիզմներ: Ուսուցիչների հիմնական մասն անտեղյակ է իրեն հատկացվելիք գումարի չափից, որը ստանում է որպես փոխհատուցում, քանի որ վճարվող գումարի չափերը պարբերաբար, մարզպետարանի որոշումով պայմանավորված, փոփոխվում են:

Հետազոտության ընթացքում իրականացված հարցազրույցների, մասնավորապես, թիրախ խմբերի հետ քննարկումների ընթացքում երթեւեկող ուսուցիչներն անդրադառնում են նաեւ այսպես ասած, «կիսատ» ամիսներին, այսինքն, երբ դպրոցական արձակուրդներ են և, եթե անգամ մեկ շաբաթ է արձակուրդը, միեւնույն է, նշված ամիսների համար փոխհատուցում չի տրվում, ինչպես, օրինակ, հունվարին չեն ստացել փոխհատուցում, այն դեպքում, երբ հունվարի կեսերից դասերը վերսկսվում են: Մանկավարժները նշում են, որ Սյունիքի մարզպետարանն ուսումնական տարվա 11/բացառությամբ հուլիս /ամիսներից երթևեկության գումարներ չի նախատեսում հունվար, հունիս, օգոստոս, ինչպես նաև գարնանային, աշնանային արձակուրդներիամիսների/ հիմնականում հոկտեմբեր, մարտ/ համար: Փոխհատուցում նախատեսված է միայն 8 ամսվա համար, այն դեպքում, երբ մյուս նշված ամիսներին, եթե ոչ ամբողջությամբ՝ այնուամենայնիվ, օրերի մեծ մասն այցելում են դպրոց:

Հետազոտության արդյունքում պարզվեց նաև, որ դպրոցների երթեւեկող վարչական աշխատողները չեն փոխհատուցվում:

Փոխհատուցման ընթացակարգի վերաբերյալ մանկավարժների իրազեկությունը

Փոխհատուցման կարգի և կիրառվող ընթացակարգի վերաբերյալ մանկավարժների իրազեկությունը ցածր է: Նրանք անտեղյակ են, թե ինչ ընթացակարգով է փոխհատուցման գումարները պետական բյուջեից հասնում իրենց և ինչպես պետք է այն հաշվարկվի: Նրանք նշում են, որ դպրոցը ներկայացնում է ցուցակ՝ մարզպետարանին կամ ԿԳՆ-ին, որը գումարը փոխանցում է դպրոցին, իսկ դպրոցը մանակավարժներին կամ աշակերտներին:

Մանկավարժները փոխհատուցման խնդիրները հիմնականում բարձրացնում են դպրոցի տնօրենի առջև՝ այն էլ ոչ հաճախ, իսկ մարզային կամ ԿԳՆ մակարդակում հազվադեպ են բաձրացնում: Տրանսպորտի փոխհատուցման խնդիրները դպրոցի խորհուրդներում երբևէ չեն քննարկվում:

5. Երթևեկության խնդիրների ազդեցությունը ուսումնադաստիարակչական պրոցեսի արդյունավետության վրա

Մանկավարժները նշում են, որ տրանսպորտային դժվարությունները հնարավորություն չեն տալիս ամբողջական արտադասարանական աշխատանքներ իրականացնել: Երթևեկության վրա ծախսված ժամանակը, հոգնածությունը և անհարմարությունները բացասաբար են ազդում ուսումնական պրոցեսի վրա, թեև իրենց նշելով՝ հասցնում են իրականացնել իրենց պարտականությունները:

- **<u>Տրանսպորտի պատասխանատուների կարծիքը խնդրի վերաբերյալ</u>**
  Սերյոժա Արզումանյան-Սյունիքի և Վայոց Ձորի տրանսպորտային տեսչության բաժնի պետ

Համայնքներում միջհամայնքային տրասնպորտի բացակայությունը հաճախ պայմանավորված է ուղևորահոսքի թվի հետ, օրինակ Խոզնավար, Խնածախ, Վաղատուր գյուղերը 20 օր սպասարկելուց հետո սպասարկող «Շահնան» ՍՊԸ-ի տնօրեն Աշոտ Սահակյանը հրաժարվել է հենց այն պատճառով, որ վնասով էր աշխատում: Սյունիքի և Վայոց Ձորի տրանսպորտային տեսչության բաժնի պետ Սերյոժա Արզումանյանը նշում է, որ միջհամայնքային տրանսպորտային ծառայություն իրականացնելու համար հայտարարված մրցույթներին շատ հաճախ գոնե 1 հայտ չի ներկայացվում: Հիմնական պատճառն, ըստ նրա, կապված է առաջարկվող գնով, քանի որ մի կողմից ծառայություն մատուցող կազմակերպությունը սկսում է վնասով աշխատել, քանի որ մրցույթին ներկայացված գինը չի ծածկում ծախսերը, մյուս կողմից մարդիկ վճարունակ չեն, ուղևորավարձը բարձրացնելու դեպքում դժգոհություններ են լինում:

Տրանսպորտի գինը որոշելիս հաշվի է առնվում ճանապարհի երկարությունը, վիճակը, սպասարկումը, տեղանքը, վառելիքի ծախսը և շահութաբերությունը: Խորհրդային տարիներին հանրային տրանսպորտն աշխատում է պետության կողմից հատկացվող դոտացիայով: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով/հոդված 32/ տեղական իշխանությունները ևս կարող են աջակցել երթուղին սպասարկող ընկերություններին:

Ըստ Սյունիքի մարզպետարանի տրանսպորտային ծառայությունների մասին ամփոփագրի՝ 2015թվականի տվյալներով մարզի 107 համայնքներից գործում է 11 ներմարզային երթուղի, որը սպասարկվում է 11 ուղևորափոխադրող կազմակերպության կողմից: Սպասարկման գործում ընդգրկված են 19 տրանսպոր-տային միջոցներ (միկրոավտոբուսներ՝ 16,ավտոբուսներ՝3): Վերլուծությունները ցույց են տալիս, որ ուղևորահոսքի սակավության, ոչ օրինական տրանսպորտի գործունեության և մրցակցության բացակայության պատճառներով ներմարզային հասարակական տրանսպորտի աշխատանքը բավարար չէ: Մարզպետարանի տրանսպորտի եւ ճանապարհաշինության բաժնի մրցութային հանձնաժողովը տարածաշրջանի միջհամայնքային բազմաթիվ երթուղիներ սպասարկելու համար տարեկան կազմակերպում է երկու տասնյակից ավելի մրցույթ, բայց, որևէ տրանսպորտային կազմակերպություն մասնակցելու ցանկություն չի հայտնում: Օրինակ, Գորիս-Խնածախ-Վաղատուր-Խոզնավար երթուղին սպասարկելու համար մարզպետարանը 4 անգամ մրցույթ է հայտարարել, սակայն դիմողներ չեն եղել: Տրանսպորտային կազմակերպությունները հրաժարվում են սպասարկել, նշելով, ուղեւորահոսքի

պակասը, անօրինական տաքսիների գործունեությունը, ինչպես նաև անբարեկարգ ճանապարհները:

2014թվականի սեպտեմբերից հանրային տրանսպորտ չի գործում նաեւ Խոտ, Շինուհայր, Հալիձոր, Տեղ, Կորինձոր, Քարաշեն, Հարթաշեն համայնքներում, իսկ Որոտան, Հարժիս, Բարձրավան համայնքի բնակիչները դժվարանում են հիշել, թե վերջին անգամ երբ հանրային տրանսպորտ աշխատել:

ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարությունում ու Սյունիքի մարզպետարանում տրանսպորտի հարցը մշատապես քննարկվում է:

Մարզային պատասխանատուներ

Երթևեկող ուսուցիչների ճանապարհածախսի փոխհատուցման մասին միակ փաստաթուղթը 1992 թվականին Կառավարության կողմից ընդունած որոշումն է/տես վերևում/: Դրանից հետո այդ որոշումը որևէ փոփոխության չի ենթարկվել: Մարզպետարանը ուսուցիչներին փոխատուցում է հետևյալ կերպ.

Եթե տվյալ համայնքում գործում է միջհամայնքային տրանսպորտ, ապա փոխհատուցվում է համապատասխան գումարը, իսկ եթե ոչ՝ գումարը հաշվարկվում է 1 կմ-ը 12 դրամով: Եթե դպրոցների հաշվապահները մեծ գումարներ են ներկայացնում, մարզպետարանը միևնույն է իր չափորոշիչներով է փոխհատուցում:

Վարչական աշխատողներին չեն փոխհատուցում, քանի որ ըստ մարզպետարանի, Կառավարության որոշման համաձայն փոխհատուցվում են միայն երթևեկող ուսուցիչներն ու աշակերտները, որը կարգավորվում է «Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում» հոդվածով:

Ըստ մազպետարանի պատասխանատուների, ուշացումները պայմանավորված են դպրոցների հաշվապահների գործելաոճով և պատասխանատվությամբ:
Իսկ թե ինչպես են վերահսկվում փոխհատուցվող գումարները, արդյոք հասնում են հասցեատերերին, թե ոչ՝ մարզպետարանի տվյալ ոլորտի պատասխանատուն պատասխանեց, որ յուրաքանչյուր դպրոցից ամեն եռամսյակ ու կիսամյակ հաշվետվություն են ներկայացնում ուսուցիչների անուն-ազգանուններով, տրամադրված գումարով, ստորագրությամբ, իսկ ստուգելու համար ուսուցչի երթևեկության մասին համայնքապետարանից գրություն են պահանջում:

Եզրակացություն - առաջարկություններ՝ ուղղված բարելավմանը

- Մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տրանսպորտային ուղեվարձի փոխհատուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է մշակել և կիրառել համապատասխան հստակ ընթացակարգ, որն ապահովի արագ և լիարժեք փոխհատուցում, նվազեցնելով սուբյեկտիվությունն այս գործընթացում:

- Անհրաժեշտ է ապահովել լիարժեք փոխհատուցում մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տրանսպորտային փոխհատուցումը նաև արձակուրդների կամ լրացուցիչ այցելությունների ժամանակ:

- Բարձրացնել մանկավարժների և դպրոցահասակ երեխաների, ծնողների իրազեկությունը տրանսպորտային փոխատուցման մասին առկա չափորոշիչների և նորմերի վերաբերյալ:

- Բարձրացնել հաշվետվողականությունը և թափանցիկությունը մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տրանսպորտային փոխհատուցման գործընթացում, բարձրացնել ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների ուշադրությունը, մասնակցությունը կրթական համակարգում:

- Մշակել և նոր մեթոդներ կիրառել հատուկ դեպքերի համար, որտեղ չեն գործում հասարակական տրանսպորտը կամ կան խնդիրներ, որոնք յուրահատուկ են:

- Պարբերաբար ԶԼՄ-ների ուշադրությունը սևեռել մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տրանսպորտային խնդիրների վրա:

- Պարբերաբար հանրային հնչեղություն հաղորդել մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տրանսպորտային ուղեվարձի փոխհատուցման հետ կապված խնդիրներին, բարձրացնել պետական մարմինների պատասխանատվությունը և ուշադրությունն այս խնդրների նկատմամբ:

- Ավելացնել պետական բյուջեից փոխհատուցման գումարների չափը և վերահսկողությունը գումարների բաշխման գործընթացի նկատմամբ:

- Բարձրացնել համագործակցությունը տրանսպորտային ծառայություն մատուցողների, դպրոցների և կրթական պատասխանատու կառույցների հետ՝ համատեղ լուծելու առկա խնդիրները:

- Միջհամայնքային տրանսպորտի ծառայությունը կազմակերպել այնպես, որ հաշվի առնվի ուսուցիչների և աշակերտների հաճախումները դպրոց, ինչպես նաև հանրային տրանսպորտի ժամային գրաֆիկները հարմարեցվի ուսուցիչների և աշակերտների աշխատանքների հետ:

- Դպրոց եթևեկող վարչական աշխատողների համար նույնպես անհրաժեշտ է նախատեսել տրանսպորտի փոխհատուցում, հատկապես այն վարչական աշխատողների համար, ովքեր նաև մանակավարժական աշխատանք են կատարում:

Բովանդակություն

Ներածություն ____ 3

Հետազոտության մեթոդաբանությունը

Նպատակը եվ խնդիրները ____ 4

Հետազոտության մեթոդները ____ 4

Իրականացված գործողություններ ____ 5

Հետազոտության արդյունքները ____ 6

Հարցաշրջիկներ դպրոցների տնօրենների եվ ուսուցիչների հետ

Ճաքիի միջնակարգ դպրոց ____ 8

Սիսիանի ավագ դպրոց ____ 9

Գորայքի միջնակարգ դպրոց ____ 10

Իշխանասարի հիմնական դպրոց ____ 13

Աշոտավանի միջնակարգ դպրոց ____ 14

Կոռնիձորի միջնակարգ դպրոց ____ 15

Քարաշենի միջնակարգ դպրոց ____ 16

Ֆոկուս խմբային քննարկումներ ՀՀ Սյունիքի մարզում

Սիսիանի ֆոկուս-խմբային քննարկում ____ 17

Կապանի ֆոկուս-խմբային քննարկում ____ 19

Մեղրիի ֆոկուս-խմբային քննարկում ____ 21

Քննարկումների արդյունքում բացահայտված խնդիրներ ____ 23

Հարցաշրջիկներ-հանդիպումներ խնդրին առնչվող պատասխանատու մարմինների հետ ____ 28

Եզրակացություն-առաջարկություններ՝ ուղղված բարելավմանը ____ 30